



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-06-02 (Tel./Fax), cs@ysu.am, www.ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°12

**ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 14.03.2018 ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻՑ**

Օրակարգ՝

1. Քննաշրջանի արդյունքների ամփոփում
2. Լուծարքների և վերահանձնումների կազմակերպման հետ կապված հարցեր
3. Ընթացիկ հարցեր

1-ին հարցի վերաբերյալ

ԼՍԵՑԻՆ՝ ԻԿՄ ֆակուլտետի դեկանի տեղակալ Գ. Ասլամազյանը համառոտ ներկայացրեց քննաշրջանի արդյունքները: Երկրորդ լուծարքային քննություններից հետո արձանագրվել է հետևյալ պատկերը(աղյուսակներում բերված առարկայական պարտքերի քանակը ըստ խմբերի): Նշվեց, որ պարտքերը անհամասեռ են բաշխված ըստ առարկաների, ինչպես նաև խիստ տարբեր արդյունքներ են արձանագրվել միևնույն առարկայից նույն կուրսի տարբեր հոսքերում, ինչը իսկապես մտահոգիչ է:

1-ին կուրս

	701	702	703	704	705	706	707	708	709	710	711	712
մաթ.անալիզ	6	0	6	1	2	4	0	0	4	1	2	3
Էիմ և ծրագր.	2	0	2	1	0	2	7	5	4	2	2	6
դիսկ. մաթեմ.	3	0	2	0	0	3	1	0	4	0	1	2

	7.1	7.2
մաթ. անալիզ	2	0
ծրագրավորում	1	0
դիսկ. մաթ և մաթ. կիր	4	3
Անալ. երկր. և հանր.տարրեր	1	2

2-րդ կուրս

	601	602	603	604	605	606	607	608	609	610	611	612
մաթ.անալ. -3	5	4	2	1	2	8	1	1	2	2	4	3
հանրահ.-2	1	4	2	0	0	2	0	0	1	1	3	1
էիմ ճար.և սս.	1	5	2	0	0	2	5	5	3	4	6	6
տվյալ. կառ.	1	2	2	0	0	3	0	1	0	3	3	5
անգլերեն լ.- 3	0	2	1	0	0	0	0	0	1	1	3	1

	6.1	6.2
հանրահաշիվ -2	3	1
տվյալների բազա -1	3	0
ռուսաց լեզու - 3	1	0
անգլերեն լ. - 3	1	0
հաշվողական համակ. ճարտ.	2	0
կոմպ. ցանցեր և ամփոսանգ.	2	0
տվյալ. կառ. -1	2	0

3-րդ կուրս

	501	502	503	504	505	506	507	508	509
դիֆ. հավասարում.	2	4	3	0	2	2	1	0	2
ալգորիթմների տես.	1	1	0	0	1	2	0	0	0
ֆունկ. անալիզ	1	0	0	0	3	2	0	1	0
թարգմ. տեսություն	1	1	0	0	1	2	0	0	0
թվային մեթոդներ-1	0	0	0	0	2	2	0	0	0
օպերացիոն համակ.	1	2	0	1	3	2	0	0	0
կուրսային աշխ.-1	0	2	0	0	0	2	0	0	0

	5.1	5.2
դիֆ. հավասարում.	0	0
ալգորիթմների տես.	0	0
Ֆունկ. անալիզ	0	0
Ֆունկցիոնալ ծրագրավ.	0	0
հանրահ. և անալ. մաթ.մեթ.	0	0
տվյալների հենքեր	0	0
կուրսային աշխ.-1	0	0

4-րդ կուրս

	401	402	403	404	405	406	407	408	409
գործ. հետազոտում	0	0	0	0	0	0	0	0	0
մաթ. տրամաբ.	0	0	0	0	0	0	0	0	0
հավանակ. տես.	0	0	0	0	0	0	0	0	0
տվյալների հենքեր	0	0	0	0	0	0	0	0	0
Ֆիզիկա	0	0	0	0	0	0	0	0	0
կուրսային աշխ. - 2	0	0	0	0	0	0	0	0	0

	4.1	4.2
գործողութ. հետազոտում	0	0
Ֆորմալ համակարգեր և մոդելներ	0	0
հավանակ. տես. և մաթ. վիճակագր.	0	0
փիլիսոփայության հիմունքներ	0	0
էհմ ֆիզիկական հիմունքներ	0	0
կուրսային աշխ. -2	0	0

Մագիստրատուրա

	7.1	7.3	7.4
ծրագ. լեզ. սեմանտիկա	1	3	2
մատրիցային անալիզ	1	0	0

Որոշեցին՝

Քննաշրջանի արդյունքների վերաբերյալ բերված տվյալները ընդունել ի գիտություն:

2-ին հարցի վերաբերյալ

Լսեցին՝ Ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը իր ելույթում նշեց, որ երկրորդ լուծարքային քննություններից հետո ԵՊՀ – ում թվով ամենաշատ հեռացվածները եղել են ԻԿՄ ֆակուլտետից (23 ուսանող, հիմնականում II և III կուրսերից): Քննաշրջանի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ կա բևեռացում որոշ առարկաների մասով: Ամենաշատ անբավարար գնահատականներ արձանագրվել են «մաթեմատիկական անալիզ» և «Էհմ ճարատարապետություն և ասեմբլեր» առարկաներից: Եթե «մաթեմատիկական անալիզ» առարկայից պարտքերը բախշված են հավասարաչափ ըստ հոսքերի, ապա «Էհմ ճարատարապետություն և ասեմբլեր» առարկայից պարտքերի բախշվածությունը ըստ հոսքերի անհավասարաչափ է: Դա այն դեպքում, երբ ֆակուլտետում հոսքերը մոտավորապես հավասարազոր են: Դա կարող է ունենալ միայն մեկ բացատրություն. թերևս խախտվում է քննությունների անցկացման կարգը: Լուծարքային քննությունները պետք է անցկացվեն միայն հանձնաժողովներով, ինչը կապահովի միասնական քննական չափանիշներ բոլոր ուսանողների համար: Մտահոգիչ է մոտեցումների տարբերությունը «Էհմ ճարատարապետություն և ասեմբլեր» առարկայի դեպքում: Անհրաժեշտության դեպքում ամբիոնները պետք է ֆակուլտատիվ պարապմունքներ կազմակերպեն: Մասնագիտական էներգիան պետք է զգալի մասով օգտագործել լավագույն ուսանողներին գիտելիքներ հաղորդելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ Ս. Նիգիյանը, Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը:

Որոշեցին՝ Հանձնարարել ֆակուլտետի ամբիոններին՝ քննարկել հարցը և տալ առաջարկներ:

3-րդ հարցի վերաբերյալ

Լսեցին՝ Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի դասախոս Սերգեյ Մուշեղի Սայադյանին դոցենտի կոչում շնորհելու հարցը: Ֆակուլտետի մրցույթային հանձնաժողովի նախագահ Յու. Հակոբյանը խորհրդին ներկայացրեց Ս. Սայադյանի փաստաթղթերը: Նա նշեց, որ դրանք համապատասխանում են ներկայացված պահանջներին:

Արտահայտվեցին՝ Դեկանի տեղակալ, Է. Դանոյանը, Ա. Չուբարյանը:

Որոշեցին՝ Երաշխավորել Սերգեյ Մուշեղի Սայադյանին՝ շնորհելու դոցենտի գիտական կոչում:

Լսեցին՝ Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ Յու. Հակոբյանը ներկայացրեց առաջարկ հետևյալ դասագրքերի նախապատրաստման վերաբերյալ.

- Օպտիմիզացիայի դասագիրք,
- Մաթեմատիկական ֆիզիկայի խնդիրների լուծման ուղեցույց:

Որոշեցին՝ Հանձնարարել Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի աշխատակիցներին նախապատրաստելու վերոհիշյալ դասագրքերը տպագրության:

Լսեցին՝ Գիտական խորհրդի քարտուղար Է. Դանոյանը ներկայացրեց 2017/2018 I կիսամյակի ուսանողական հարցման արդյունքները և ուսանողների կողմից արված առաջարկները: Ուսանողական հարցումների ժամանակ արված հիմնական առաջարկություններն են.

- Ավելի արդյունավետ օգտագործել համալսարանական էլեկտրոնային փոստը, բոլոր ծանուցումները և ուսանողին անհրաժեշտ տեղեկությունները ուսանողին փոխանցել էլեկտրոնային փոստի միջոցով,
- Արդիականացնել կրթական ծրագիրը, շեշտը դնելով տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման վրա,
- Վերանորոգել ֆակուլտետի մասնաշենքը, պատշաճ կահավորել լսարանները,
- Ուսանողին տրամադրել ավելի շատ էլեկտրոնային նյութեր և գրքեր:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ
Գիտական խորհրդի քարտուղար

Վ. Դումանյան
Է. Դանոյան